ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄ

25.06.2014 13:09

ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությամբ այսօր տեղի է ունեցել մասնագիտական քննարկում կապված առանց դատարանի՝ վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերի հարկադիր կատարման հետ:
Քննարկմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, ՀՀ Նախագահի ռեֆերենտ Հրայր Ղուկասյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արսեն Մկրտչյանը, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Մամիկոն Դրմեյանը, ՀՀ վարչական դատարանի դատավորներ՝ Ռուզաննա Հակոբյանը և Կարեն Ավետիսյանը, ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար Կարեն Փոլադյանը, Երևանի քաղաքապետարանի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը, պատգամավոր Արծվիկ Մինասյանը, իրավապաշտպաններ Արտակ Զեյնալյանը և Արայիկ Ղազարյանը, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Կարեն Մեժլումյանը, Մելանյա Առուստամյանը, Նելլի Հարությունյանը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ դատական դեպարտամենտի, «Հայփոստ» ՓԲԸ այլ ներկայացուցիչներ և փաստաբաններ:
Քննարկման ժամանակ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը ներկայացրել է վարչական ակտերի հարկադիր կատարման ժամանակ առաջացող հիմնախնդիրները՝ բռնագանձումը՝ առանց դատարանի իրականացնելը, պատշաճ ծանուցման շեղումները ԵՈ վարչական ակտերի դեպքում, վճարված տուգանքները համակարգ մուտքագրված չլինելը, անձի գույքը արգելանքի տակ դրված լինելը, այդ թվում՝ վարչական ակտով նախատեսված գումարից ավել (ներառյալ բանկային ամբողջ հաշվի վրա, միաժամանակ նաև անձի շարժական և անշարժ գույքի վրա), ԴԱՀԿ ծախսի անհարկի բեռը, խախտված իրավունքի վերականգնման համար միջոցների արդյունավետությունը և այլն:
Բոլոր գերատեսչությունների ներկայացուցիչներն արտահայտվել են վերոհիշյալ խնդիրների կապակցությամբ՝ ներկայացնելով իրենց մասնագիտական դիրքորոշումը:
ՀՀ փաստաբանների պալատը շնորհակալություն է հայտնում մասնակիցներին արդյունավետ քննարկման համար և մոտ ապագայում (որոշ վիճակագրական տեղեկություններ ստանալուց և վերլուծելուց հետո) հաշվի առնելով նաև այս քննարկման ժամանակ հնչեցված տեսակետները, կներկայացնի իր մասնագիտական դիրքորոշումը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 1){ updateCommentsCount(window.location.href); } })